ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. հուլիսի 8 -ին, N 238 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՌՅԱ- ԹԱԶԱՅԻ Ա.ԱՎԴԱԼԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱԶԻԿ ԿԱԿՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ռյա-Թազայի Ա. Ավդալի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նազիկ Կակոյանի 2024 թվականի հուլիսի 3-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ռյա-Թազայի Ա. Ավդալի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նազիկ Կակոյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 19-ը ներառյալ:
2. Նազիկ Կակոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ռյա-Թազայի Ա. Ավդալի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Ռյա-Թազայի Ա. Ավդալի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Արա Խաչատրյանին:
3. Նազիկ Կակոյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 20-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 08.07.2024 17:47:40 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ